ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2017 թվականի N 19-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայասատանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին>>N 1850-Ն որոշումը և այն, որ 19 փողոցի 17/2 հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով հնարավոր չէ,հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգը և Կարապետ Սիմոնյանի դիմումը՝ 04-021-078-008 կադաստրային համարով 0.102 հա բնակավայրի նշանակության կառուցապատվող հողամասը ընդլայնելու վերաբերյալ և համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 24-ի թիվ 37-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սեփականություն հանդիսացող 19 փողոցի 17/2 հասցեում գտնվող 04-021-0078-0024 կադաստրային ծածկագրով 188 ք/մ բնակավայրի նշանակության այլ հողը օտարել ուղղակի վաճառքով Արշալույս համայնքի բնակիչ Կարապետ Գևորգի Սիմոնյանին՝ կառուցապատվող հողամասը ընդլայնելու նպատակով:
2. Հողամասի 1 ք/մ կադաստրային արժեքը 1242 դրամ, ընդամենը 233496 /երկու հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի 4

գ. Արշալույս